ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 էլ.փոստ՝ info@jrvezh.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«27» ապրիլի 2018 թվականի N 158-Ա

## ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ և 4-րդ կետերի պահանջներով, ***որոշում եմ.***

1. Թույլատրել «ԲԵԼԱՍՏ-18» ՍՊԸ-ին, տնօրեն Արգինե Կարենի Ալոյան, Ջրվեժի 2-րդ թաղամասի թիվ 6/10 հասցեում 2018 թվականի ապրիլի 1-ից զբաղվելու հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ, ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի իրացմամբ:

2. Պարտավորեցնել «ԲԵԼԱՍՏ-18» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Արգինե Կարենի Ալոյան, մուծելու սահմանված տեղական տուրքը:

3. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. ապրիլի 27
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«2» մայիսի 2018 թվականի N 159-Ա

### ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Կարապետ Արամի Արզումանյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 40-րդ փողոցի թիվ 26 հասցեի տնամերձ հողամասում տալ նկուղային հարկով երկհարկանի բնակելի տան կառուցման շինարարության թույլտվություն:

2. Պարտավորեցնել Կարապետ Արամի Արզումանյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. մայիսի 2
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«2» մայիսի 2018 թվականի N 160-Ա

## ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Ջրվեժ համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.***

Քաղաքացի Վարուժան Թորոսյանը, հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2018 թվականի ապրիլի 17-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

***Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.***

Համաձայն Հայաստանի Հանրապետության ՃՈՏ Կոտայքի հաշվառման քննական բաժանմունքի կողմից տրված էլեկտրոնային տվյալների՝ քննարկվող փոխադրամիջոցը՝ 306 ձու, MERCEDES-BENZ E 500 մակնիշի, 34PT791 պետական համարանիշի, հանդիսանում է քաղաքացի Վարուժան Թորոսյանի սեփականությունը, ինչը «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Համայնքի բյուջե վճարման ենթակա գույքահարկը կազմում է 309 000 (երեք հարյուր ինը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, որը 2016-2017 թվականների ժամանակահատվածում չի վճարվել:

Քաղաքացի Վարուժան Թորոսյանի՝ նշված ժամանակահատվածի համար գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 103 940 (մեկ հարյուր երեք հազար ինը հարյուր քառասուն) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2018 թվականի ապրիլի 17-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2018 թվականի ապրիլի 27-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է քաղաքացի Վարուժան Թորոսյանը: Վերջինս վարչական վարույթի լսումներին չի ներկայացել:

***Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.***

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նշված օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանվող կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Համաձայն «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ֆիզիկական անձինք տարեկան տեխնիկական զննության ենթակա փոխադրամիջոցների համար գույքահարկի գծով հարկային պարտավորություններն ամբողջությամբ կատարում են մինչև փոխադրամիջոցները տվյալ տարվա տեխնիկական զննության ներկայացնելը:

[illegible] իրավահարաբերությունների պահին գործող «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց

յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.15 տոկոսի չափով:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ, «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 3-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Վարուժան Թորոսյանից հօգուտ Ջրվեժ համայնքի բյուջեի գանձել 412 940 (չորս հարյուր տասներկու հազար ինը հարյուր քառասուն) Հայաստանի Հանրապետության դրամ, որպես վճարման ենթակա գույքահարկի գումար, որից՝ 103 940 (մեկ հարյուր երեք հազար ինը հարյուր քառասուն) Հայաստանի Հանրապետության դրամը, որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել Վարուժան Թորոսյանին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակիցներին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչակա վարույթի մասին» Հայաստանի Հանրապետությանօրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. մայիսի 2

գ.Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 էլ.փոստ՝ info@jrvezh.am


## Ո Ր Ո Շ Ու Մ

«2» մայիսի 2018 թվականի N 161-Ա

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Ջրվեժ համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.***

Քաղաքացի Գագիկ Սիմոնյանը, հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2018 թվականի ապրիլի 17-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

***Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.***

Համաձայն Հայաստանի Հանրապետության ՃՈԸ Կոտայքի հաշվառման քննական բաժանմունքի կողմից տրված էլեկտրոնային տվյալների՝ քննարկվող փոխադրամիջոցը՝ 193 ձու, BMV 528 I մակնիշի, 34NV396 պետական համարանիշի, հանդիսանում է քաղաքացի Գագիկ Սիմոնյանի սեփականությունը, ինչը «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Համայնքի բյուջե վճարման ենթակա գույքահարկը կազմում է 96 654 (իննսունվեց հազար վեց հարյուր հիսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ, որը 2016-2017 թվականների ժամանակահատվածում չի վճարվել:

Քաղաքացի Գագիկ Սիմոնյանի՝ նշված ժամանակահատվածի համար գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ 31 616 (երեսունմեկ հազար վեց հարյուր տասնվեց) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2018 թվականի ապրիլի 17-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2018 թվականի ապրիլի 27-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է քաղաքացի Գագիկ Սիմոնյանը: Վերջինս վարչական վարույթի լսումներին չի ներկայացել:

***Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.***

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նշված օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանվող կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Համաձայն «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ֆիզիկական անձինք տարեկան տեխնիկական զննության ենթակա փոխադրամիջոցների համար գույքահարկի գծով հարկային պարտավորություններն ամբողջությամբ կատարում են մինչև փոխադրամիջոցները տվյալ տարվա տեխնիկական զննության ներկայացնելը:

Իրավահարաբերությունների պահին գործող «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.15 տոկոսի չափով:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ, «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 3-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Գագիկ Սիմոնյանից հօգուտ Ջրվեժ համայնքի բյուջեի գանձել 128 270 (մեկ հարյուր քսանութ հազար երկու հարյուր յոթանասուն) Հայաստանի Հանրապետության դրամ, որպես վճարման ենթակա գույքահարկի գումար, որից՝ 31 616 (երեսունմեկ հազար վեց հարյուր տասնվեց) Հայաստանի Հանրապետության դրամը որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել Գագիկ Սիմոնյանին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակիցներին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետությանօրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. մայիսի 2

գ.Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«2» մայիսի 2018 թվականի N 162-Ա

## ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Ջրվեժ համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.***

Քաղաքացի Մելս Կարապետյանը, հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2018 թվականի ապրիլի 17-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

***Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.***

Համաձայն Հայաստանի Հանրապետության ՃՈՏ Կոտայքի հաշվառման քննական բաժանմունքի կողմից տրված ելակետային տվյալների՝ քննարկվող փոխադրամիջոցը՝ 192 ձու, BMV 525 I մակնիշի, 09UL008 պետական համարանիշի, հանդիսանում են քաղաքացի Մելս Կարապետյանի սեփականությունը, ինչը «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հանդիսանում են հարկվող օբյեկտ: Համայնքի բյուջե վճարման ենթակա գույքահարկը կազմում է 99 515 (իննսունինը հազար հինգ հարյուր տասնհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, որը 2016-2017 թվականների ժամանակահատվածում չի վճարվել:

Քաղաքացի Մելս Կարապետյանի՝ նշված ժամանակահատվածի համար գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 33 456 (երեսուներեք հազար չորս հարյուր հիսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2018 թվականի ապրիլի 17-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2018 թվականի ապրիլի 27-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է քաղաքացի Մելս Կարապետյանը: Վերջինս վարչական վարույթի լսումներին չի ներկայացել:

***Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.***

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նշված օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանվող կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Համաձայն «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ֆիզիկական անձինք տարեկան տեխնիկական զննության ենթակա փոխադրամիջոցների համար գույքահարկի գծով հարկային պարտավորությունններն ամբողջությամբ կատարում են մինչև փոխադրամիջոցները տվյալ տարվա տեխնիկական զննության ներկայացնելը:

Իրավախախտումների պահին գործող «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.15 տոկոսի չափով:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ, «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 3-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Մելս Կարապետյանից հօգուտ Ջրվեժ համայնքի բյուջեի գանձել 132 971 (մեկ հարյուր երեսուներկու հազար ինը հարյուր յոթանասունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ, որպես վճարման ենթակա գույքահարկի գումար, որից՝ 33 456 (երեսուներեք հազար չորս հարյուր հիսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամը, որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել Մելս Կարապետյանին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակիցներին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետությանօրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. մայիսի 2
գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«3» մայիսի 2018 թվականի N 163-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 70-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով 2018 թվականի մայիսի 3-ին Ջրվեժի համայնքապետարանում կայացած համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդի NN 2/1-2/4 արձանագրությունները, ***որոշում եմ.***

1. Հաստատել համայնքային սեփականություն հանդիսացող հողերի 2018 թվականի մայիսի 3-ին կայացած աճուրդի արդյունքները և աճուրդային վաճառքի հաղթողներին տրամադրել հողամասեր, համաձայն NN 1-2 հավելվածների:
2. Հանձնարարել աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանին՝ սահմանված ժամկետում ապահովել սույն որոշմամբ աճուրդում հաղթող (գնորդ) ճանաչված անձանց կողմից վճարման ենթակա գումարների մուծումը (փոխանցումը) Ջրվեժ համայնքի բյուջեի համապատասխան հաշվին:
3. Լիազորել աշխատակազմի գլխավոր մասնագետ Արամազդ Մարգարյանին՝ աճուրդով գնված հողամասերի վճարման ենթակա գումարների (սահմանված ժամկետում ու կարգով) վճարումը կատարելուց հետո, աճուրդում հաղթողներին ապահովել հողամասի հատակագծով, նշահարման ակտով և կնքել հողամասերի օտարման պայմանագրեր:
4. Ընդունել ի գիտություն, որ հողամասերի օտարման պայմանագրերը ենթակա են նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները պետական գրանցման՝ անշարժ գույքի պետական ռեգիստրի համապատասխան ստորաբաժանումում:
5. Հանձնարարել աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետին, ապահովել հողամասերի աճուրդային վաճառքին մասնակից, չհաղթած և աճուրդին չներկայացած հայտատուների կողմից Ջրվեժ համայնքի համապատասխան հաշվին մուծված նախավճարների վերադարձը, համաձայն N 3 հավելվածի:
6. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:
7. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. մայիսի 3
գ. Ջրվեժ

Հավելված 1
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ղեկավարի 2018 թվականի
մայիսի 3-ի N 163-Ա որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՃՈՒՐԴՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՂԹՈՂԻ (ԳՆՈՐԴԻ)

1.Գնորդի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, (իրավաբանական անձի անվանումը), հասցեն՝ Արայիկ Արտավազդի Գևորգյան, անձնագիր AM 0373259, տրված 006-ի կողմից 2011 թվականի հուլիսի 13-ին, հասցեն՝ Երևան, Չարենցի թաղամաս, 17-րդ շենք, բնակարան 46:

2. Գնորդը մուծել է՝

1)900105228119 հ/հ՝ մասնակցության վճար 10 000 դրամ, անդորրագիր N 000203, մուծված 2018 թվականի ապրիլի 27-ին:

2)900105228176 հ/հ՝ նախավճար 124 358 դրամ, անդորրագիր N 901017, մուծված 2018 թվականի մայիսի 3-ին:

3. Հողամասի օգտագործման նպատակը, հասցեն՝

բնակելի տան կառուցման համար, գյուղ Ջրվեժ, 40-րդ փողոց, թիվ 5:

4. Վաճառվող հողամասի ծածկագիրը, լոտի համարը, մակերեսը, մեկնարկային գինը՝

07-057-0115-0035; 8; 552,7 քառ.մ; 2 487 150 դրամ:

5. Գնորդի կողմից աճուրդում առաջարկված հողամասի առավելագույն (վաճառքի) գինը՝ 2 611 508 դրամ:

6. Ենթակա է վճարման (հաշվի առնելով մուծված նախավճարը)՝ 2 487 150 դրամ:

Հավելված 2
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ղեկավարի 2018 թվականի
մայիսի 3-ի N 163-Ա որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՃՈՒՐԴՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՂԹՈՂԻ (ԳՆՈՐԴԻ)

1.Գնորդի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, (իրավաբանական անձի անվանումը), հասցեն՝ Տիգրան Շուրայի Հարությունյան, անձնագիր AR 0583824, տրված 004-ի կողմից 2018 թվականի փետրվարի 7-ին, հասցեն՝ Երևան, Վրացական 4-րդ նրբանցք, 5/1 շենք, բնակարան 21:

2. Գնորդը մուծել է՝

1)900105221114 հ/հ՝ մասնակցության վճար 10 000 դրամ, անդորրագիր N 000595, մուծված 2018 թվականի ապրիլի 25-ին:

2) 900105221171 հ/հ՝ նախավճար 25 000 դրամ, անդորրագիր N 000870, մուծված 2018 թվականի մայիսի 3-ին:

3. Հողամասի օգտագործման նպատակը, հասցեն՝

Գյուղատնտեսական գործունեության համար, համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր:

4. Վաճառվող հողամասի ծածկագիրը, լոտի համարը, մակերեսը, մեկնարկային գինը՝

07-042-0356-0007; 16; 9596,3 քառ.մ; 500 000 դրամ:

5. Գնորդի կողմից աճուրդում առաջարկված հողամասի առավելագույն (վաճառքի) գինը՝ 575 000 դրամ:

6. Ենթակա է վճարման (հաշվի առնելով մուծված նախավճարը)՝ 550 000 դրամ:

Հավելված 3
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ղեկավարի 2018 թվականի
մայիսի 3-ի N 163-Ա որոշման

ՋՐՎԵԺԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ, ՉՀԱՂԹԱԾ ՀԱՅՏԱՏՈՒՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՆ ՄՈՒԾՎԱԾ ՆԱԽԱՎՃԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ

1. Արթուր Ռոմենյի Ավոյան, (անձնագիր AM 0648518, տրված 2012 թվականի փետրվարի 24-ին 012-ի կողմից, հասցեն՝ քաղաք Երևան, Էստոնական փողոց, 11-րդ շենք, բնակարան 8), 124 358 դրամ, անդորրագիր N 901018, մուծված 2018 թվականի մայիսի 3-ին:

2. Բենիամին Համլետի Բաբայան, (անձնագիր AK 0404469, տրված 2009 թվականի նոյեմբերի 27-ին 011-ի կողմից, հասցեն՝ քաղաք Երևան, Աբովյան փողոց, 36-րդ շենք, բնակարան 21), 25 000 դրամ, անդորրագիր N 000870, մուծված 2018 թվականի մայիսի 3-ին:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 էլ.փոստ՝ info@jrvezh.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«5» մայիսի 2018 թվականի N 164-Ա

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Արեգ Արթուրի Ավետիսյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

Արեգ Արթուրի Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 2-րդ թաղամասի թիվ 1/9/1 և 2-րդ թաղամասի թիվ 1/10 հասցեների հողակտորները միավորել և միավորված անշարժ գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 2-րդ թաղամաս, թիվ 1/10:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. մայիսի 5
գ. Ջրվեժ